ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/17640-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Պ-954-29.04.2021-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 515 - Ա որոշումը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-954-29.04.2021-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախևառաջ, հարկ ենք համարում անդրադառնալ նախագծի հիմնավորմանը: Այսպես, առաջարկվող կարգավորումների ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ Հայաստանի համայնքների բնակչության կողմից ամենաշատ բարձրացվող դժգոհություններից են շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ապօրինի ծառահատումները: Ծառահատումները հաճախ իրականացվում են սեփականաշնորհված կանաչ տարածքներում, որոնք նախկինում ծառայել են որպես ընդհանուր օգտագործման տարածքներ:

Թեև ակնառու են լինում համայնքի բնակչության իրավունքների խախտումները՝ ծառահատման հետևանքով էկոհամակարգային ծառայություններից զրկվելու առումով, այդուհանդերձ, օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումների ընդունման դեպքում էլ որևէ կերպ չի ապահովվում օրենքի նախագծի հիմնավորմամբ նկարագրված ակնկալվող արդյունքը, այն է՝ բնակչության կողմից էկոհամակարգային ծառայություններից օգտվելու իրավունքի պաշտպանվածության ապահովումը:

Ըստ նախագծի հիմնավորման՝ նախագծով ակնկալվում է համայնքի ավագանու կողմից սահմանել կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոններ, անկախ նրանից թե ով է տվյալ տարածքի սեփականատերը, որի արդյունքում էլ կերաշխավորվի այդ տարածքների կողմից ապահովվող էկոհամակարգային ծառայություններից օգտվելու բնակչության իրավունքը:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է սեփականատիրոջ սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորություն, սակայն այն կարող է իրականացվել միայն մեկ նպատակի համար, այն է՝ հանրության շահերի կամ այլոց

հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, հետևաբար, նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջարկվող կարգավորումն ուղղակիորեն առնչվում է անձի սեփականության իրավունքի բաղադրատարր հանդիսացող սեփական հայեցողությամբ սեփականությունն օգտագործելու իրավազորության սահմանափակման հետ, գտնում ենք, որ առաջարկվող կարգավորումները բավարար չափով հիմնավորված չեն:

Բացի դրանից, համայնքի վարչական սահմաններում ընդգրկված են լինում նաև պետական սեփականություն հանդիսացող անտառներ և բնության հատուկ պահպանվող տարածքներ, որոնց համար Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ ենթաօրենսդրական ակտերով արդեն իսկ սահմանված են վերջիններիս պահպանման և օգտագործման կանոնները, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված չէ «կանաչ տարածքներ» հասկացությունը (որի բովանդակությունից պարզ կլիներ, որ «կանաչ տարածքներ» հասկացության մեջ ներառված չեն, օրինակ, պետական սեփականություն հանդիսացող անտառները և բնության հատուկ պահպանվող տարածքները), ուստի, կարծում ենք, որ նախագծի ընդունման պարագայում կարող է ստացվել այնպես, որ ավագանին պետք է սահմանի նաև պետական սեփականություն հանդիսացող անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների համար պահպանման և օգտագործման կանոններ, որոնք արդեն իսկ սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական այլ ակտերով:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը նպատակահարմար չէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Պ-954-29.04.2021-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-954-29.04.2021-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 36.1-ին կետով. «36.1) սահմանում է համայնքի վարչական սահմաններում գտնվող կանաչ տարածքների պահպանման եւ օգտագործման կանոնները՝ անկախ սեփականության ձեւից՝ այդ տարածքների կողմից ապահովվող էկոհամակարգային ծառայություններից օգտվելու բնակչության իրավունքն երաշխավորելու նպատակով.»:

Հոդված 2. Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ կետով. «2) կազմակերպում է համայնքի վարչական սահմաններում գտնվող կանաչ տարածքների պահպանման եւ օգտագործման կանոնների պահպանությունը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ներկայումս Հայաստանի համայնքների բնակչության կողմից ամենաշատ բարձրաձայնվող դժգոհություններից են՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ապօրինի ծառահատումները:

Ծառահատումները հաճախ իրականացվում են սեփականաշնորհված կանաչ տարածքներում, որոնք նախկինում ծառայել են որպես ընդհանուր օգտագործման տարածքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է ՝ «Հողամասի սեփականատերն իրավունք ունի օգտագործելու այն ամենը, ինչը գտնվում է իր հողամասի մակերեսին եւ դրա տակ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով ու չի խախտում այլ անձանց իրավունքները:»:

Թեեւ ակնառու են լինում համայնքի բնակչության իրավունքների խախտումները՝ ծառահատման հետեւանքով էկոհամակարգային ծառայություններից զրկվելու առումով, այդուհանդերձ, օրենքով այդ իրավունքի պաշտպանվածության վերաբերյալ որեւէ կարգավորում նախատեսված չէ:

Ավելին, **«Բնապահպանական իրավախախտումների հետեւանքով կենդանական եւ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է** , որ օրենքը չի տարածվում «քաղաքացիների սեփականություն հանդիսացող կամ նրանց օգտագործման իրավունքով տրամադրված հողամասերում կամ օրինական հիմքերով օգտագործման տրամադրված արոտավայրերում կամ խոտհարքներում աճեցված եւ Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում չգրանցված բուսական աշխարհի օբյեկտների վրա»:

Հետեւապես, առաջարկվող օրենսդրական լրացումները նպատակ ունեն լրացնելու օրենսդրական բացերը եւ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահել իրավասություն՝ կարգավորել առկա խնդիրները՝ երաշխավորելով էկոհամակարգային ծառայություններից օգտվելու բնակչության իրավունքը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում համայնքի ավագանու կողմից կսահմանվեն կանաչ տարածքների պահպանման եւ օգտագործման կանոններ, անկախ նրանից թե ով է տվյալ տարածքի սեփականատերը, որի արդյունքում էլ կերաշխավորվի այդ տարածքների կողմից ապահովվող էկոհամակարգային ծառայություններից օգտվելու բնակչության իրավունքը: